

# ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կլիման եղանակի բազմամյա ռեժիմ է, որը որոշվում է տեղանքի աշխարհագրական լայնությամբ, օվկիանոսից ունեցած հեռավորությամբ, ցամաքային ռելիեֆով, ծովի մակարդակից ունեցած բարձրությամբ և մի շարք այլ գործոններով: Կլիմայի աննշան փոփոխությունները երկար ժամանակահատվածում թույլ են տալիս համարել նրան տվյալ տեղանքի կայուն բնութագիր: Այդ պատճառով կլիման հանդիսանում է աշխարհագրական լանդշաֆտի բաղադրիչներից մեկը: Մեր մոլորակի կլիման միջտ փոփոխվել է բնական ճանապարհով: Սակայն գիտնականները գտնում են, որ ներկայումս տեղի է ունենում կլիմայի նոր տիպի փոփոխություն: Այն մարդկանց և էկոհամակարգերի վրա կտրուկ ազդեցություն ունի: Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խումբն (IPCC - ԿՓՓՄԽ) իր գնահատման երրորդ զեկույցում նշում է, որ "նոր ձևով և ավելի ակնհայտ հաստատվում է, որ վերջին 50 տարում դիտարկվող տաքացումը, մեծ մասամբ, պայմանավորված է մարդու գործունեությամբ": Հազարամյակների ընթացքում մարդու տնտեսական գործունեությունը հարմարվում էր շրջապատող կլիմայական պայմաններին: Թվում էր, թե բնության վրա մարդածին ազդեցությունը չի կարող ազդել կլիմայի կայունության վրա: Սակայն, XX դարի կեսերից, մարդու գործունեությունը գնալով ձեռք էր բերում այնպիսի մասշտաբներ, որ ծառացավ կլիմայի վրա մարդու տնտեսական գործունեության ունեցած ազդեցության խնդիրը: Կլիմայի մարդածին գործոնների թվին են պատկանում.

1. Տնտեսական գործունեության ազդեցությունը մթնոլորտի քիմիական բաղադրության վրա, ինչը պայմանավորված է ածխածնի երկօքսիդի և այլ ջերմոցային գազերի արտանետմամբ:
2. Հողային ընդարձակ զանգվածների մերկացումը, անտառների ոչնչացումը, անասունների գերարածեցումը և տնտեսական այլ գործունեություններ, որոնց հետևանքով փոփոխվում է Երկրի մակերևույթի ալբեդոն, խանգարվում են ջերմա- և խոնավաշրջանառության պրոցեսները:
3. Ջերմային աղտոտումը, գոյություն ունեցող ջրամաբարների վատթարացումը և նորերի կառուցումը, արիդ գոնաներում բուսականության ոչնչացումը:
4. Ազդեցությունը մթնոլորտ-օվկիանոս-ցամաքի մակերևույթ համակարգի խոնավաշրջանառության վրա. ազդեցությունը ամպամածության վրա, գոլորշիացման մեծացումը ռոռզվող հողատարածքների շրջաններում, օվկիանոսային ջրերի աղտոտումը և այլն:

5. Մարդու կողմից օգտագործվող էներգիան ամբողջությամբ վեր է ածվում ջերմության, որի հիմնական մասը մթնոլորտի համար էներգիայի լրացուցիչ աղբյուր է հանգեցնում է վերջինիս ջերմաստիճանի բարձրացմանը: Չնայած ապագա փոփոխությունների անորոշության պատճառով գնահատումների սխալները մեծ չափերի են հասնում, այնուամենայնիվ կանխատեսվում է, որ առաջիկա 100 տարիների ընթացքում ցամաքի մակերևույթի ջերմաստիճանը կբարձրանա 1.4°C-ից մինչև 5.8°C: Տաքացումը, նույնիսկ ցածր մակարդակով, կարող է հանգեցնել դրամատիկ հետևանքների: Մարդկանց վրա այդ ազդեցությունն, անխուսափելիորեն, կլինի առավել զգալի: Որոշ շրջաններում կլիմայի փոփոխությունից մարդիկ կարող են շահել: Սակայն շատերը ստիպված կլինեն պայքարել նրա դեմ: Սակավ ռեսուրսների պատճառով զարգացող երկրներն առանձնապես խոցելի են անբարենպաստ պայմանների կամ մեծ մասշտաբի աղետների հանդեպ, չնայած մարդու գործունեության հետևանքով զարգացող երկրներում ջերմոցային գազերի արտանետումները միայն փոքր մասն են կազմում: